

Ես հոգիէս ձանձրացայ,
— Այս քնն օրեր, տէր Աստուած, —
Աիրտս 'ի ծոցիս կը գողայ
Տակն ու վրայ խրաոված ։
Անցած օրերս յիշեցի,
Գըթութիւնքդ միտքս եկան,
Արարածներդ դիտեցի .
Փառք տըւողիդ . գոհանամ ։
Ինչպէս ծարուած չոր գետին
Կը թալկանայ իմ հոգիս ։
Շուտ լըսէ ինձ, Աստուած իմ .
Անցուր ծարաւը սըրտիս ։
Մի՛ կ'աղաչեմ դարձնել
Ինձմէ երեսդ գըթութեան .
Թէ չէ՛ իբրև մի մեռել,
Ի գուր թաղուած կը մընամ ։
Ողորմութիւնդ իմ վրայ ,
Ինչպէս առտու արեգակ ,
Տուր որ պայծառ երևայ .
Զի յոյս իմ ես դու միակ ։
Յըցուր ինձի մի ճամբայ
Որով երթամ ես չիտակ .

Իմ յոյս ու աչք քու վրայ
Են, Տէր, ամէն ժամանակ ։
Աղատէ դիս, Տէր, փրկէ
Իմ թշնամեացրս ձեռքէն .
Նեղ օրերուս ինձ օգնէ .
Զի գու. ես իմ ապաւէն ։
Սովորեցուր, Տէր, ինձի
Քո սուրբ կամքդ կատարել .
Եւ մի թողուր ինձ իսկի
Քեզմէ մեկնիլ՝ բաժնուել .
Քոյին Հոգիդ սուրբ բարի .
Դէպ 'ի յերկնից կայարան ,
Թող առաջնորդ ինձ լինի
Հասանելու անխափան ։
Քու անունիդ համար, Տէր,
Պահէ, փրկէ դիս չարէ .
Զիս պատեցին նեղ օրեր
Արդարութեամբդ ազատէ ։
Տէր իմ, կորցուր ու ջընջէ
Թշնամիներս անօրէն ,
Աշխարհք բոլոր թող հընչէ
Թէ ես քուկին ծառայէ եմ ։

Հ. Բ. Վ. ԲՈՒՆԵՐԵԱՅԵ

ՅԱՓՇՏԱԿՈՒԱԾ ԲՈՅՆԵ

Աւաղ . նոքա վաղը տուտու
Կարնային յօղըս թըռչելու .
Լըսէ՛ նոցա մօր աղայանք,
Ահ, դարձուր ինձ իմ սիրուն ձագք ։

Ինչ է յանցանքս . դըպա՞յ արդեօք
Ես մի անգամ, կամաց թեւօք,
Խաղողներուդ ողկոյններուն ,
Կամ պարտիդիդ պըտուղներուն ։
Իմ ձագերուս ուտիլք, կեր
Ես կը ժողվեմ միտս փօր օրդեր ,
Եւ օգային մանրը ճանձիկ .
Մաբուր աղբեր ջուրն՝ խըմելիք ։

Աւաղ . նոքա վաղը առտու
Կարնային յօղըս թըռչելու .
Լըսէ՛ նոցա մօր աղայանք,
Ահ, դարձուր ինձ իմ սիրուն ձագք ։

Նեղ վանդակին մէջը փակուած
Նոքա՛ մեռնին յուսահատած .
Դու չես լըսեր, յանտաւին մէջ
Նոցա երգին քաղցր ելէջի ։
Ահ, կը մեռնին ։ Պիտի՞ գայ՝ լայ
Դոցա մարիկ ամէն իրկուն ,
Եղբեանի ծառին վըրայ,
Իւր խեղճ ձագեր ու քանդած բոյն ։

Աւաղ . նոքա վաղը տուտու
Կարնային յօղըս թըռչելու .

Լըսէ՛ նոցա մօր աղայանք,
Ահ, դարձուր ինձ իմ սիրուն ձագք ։

Երբոր ձըմեռն ձիւնի բարդեր
Ծածկեն ձեր դադուն և անտառներ ,
Քու առանձնակ խըրճթիդ 'ի տես
Թըռչըտելով յայց կու գամ ես ։
Յուրա քամիներ ո՞րչափ կ'ուզես
Բապառնայից թող որ փըշեն .
Ես ձիւնապատ ծառերուն տակ
Կ'երգեմ, դարնան քեզ եղանակ ։

Աւաղ . նոքա վաղը առտու
Կարնային յօղըս թըռչելու .
Լըսէ՛ նոցա մօր աղայանք,
Ահ, դարձուր ինձ իմ սիրուն ձագք ։

Ո՛վ դու անգութ մատաղ աղջիկ,
Խընտում երես՝ առիր քոյ գիրկ
Բոյն ձագերով 'ի միտսին .
Քու ետեւէդ ճանապարհին
Դառէ՛ 'ի ծառ մայրն թըռչելով ,
Եկաւ հասաւ ձեր դըրան քով ։
Քաղցուն ծարաւ՝ յերկրորդում օր
Սատակեցան ձագեր բոլոր ։

Երկու տարի վրան անցաւ
Աղջիկը հարսն և մայր եղաւ .

Գիրկը սիրուն մի երեխայ՝
Մօր սիրտ վրտան կը դողդղայ .
Աչքեր կապոյտ, չէկ չէկ մազեր,
Շընորհայի փայլին թուշեր:
Ո՛հ, չէ՛. այսպէս տեսաք տղայ
Բոլոր աշխարհք փընտռես չըկայ:

Այլ, տե՛ս, յանկարծ նենգժոտ օրհաս
Պաղ ձեռք ձրգեց դէպ 'ի տըղուն .
Ո՛վ ցաւ անլուր. նոր-մայրն, նոր-հարս
Կը պաղատէր անգուլթ մահուն .
« Ա՛հ, խընայէ որդւոյս սիրուն,
Թարգմ. Հ. Ք. Վ. ՔՈՒՇԵՆԵՐԵԱՆ

« Թո՛ղ որ դըրկացըս մէջ խայտայ,
« Թո՛ղ որ ժուպտին աշերն նաշխուն »:
— ԱՅԼ ՆՐԱՆԵՅ ՈՐՀԱՆՈՒՆՆԵՐԱ:

Մինակ՝ 'ի տան երեկոյին,
Յորում սըրտի ցաւք բորբոքին,
Սըգատեսիլ ընդ ուռննեաւ
Անքաղղ մարկն լալու եկաւ:
Հոն խառնելով իւր կրակիծներ
Սըգաւոր մօր հեկեկանաց,
Խայտիտ՝ ուռին վերեւ թառած,
« Ա՛հ, տո՛ւր, կ'աւեր, տո՛ւր իմ ձագեր »:

ՇՈՓԷՆ

Մ Ա Ն Ր Ա Վ Է Պ Ք

Խ Ա Ձ Ս Ր Բ Ո Յ Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն ՈՒ

Ա



« Բանտ քաղաքին մօտերը՝ չորս
հինգ հարիւր բարձրակառոյց
տներէ բաղկացեալ աւան մի կայ՝
որոյ բնակիչք վաճառական և շատ
հարուստ են . այս պատճառաւ այս
գիւղաքաղաքիս մէջ մէկ խեղճ տուն
չես գտներ: Այս ճոխ տներէն միոյն
տէրն կը կոչուէր Բաղտասար Մէրքս,
որ Կանտեցի հարուստ վաճառական
մ'էր, և 1535ին իր յիսներորդ տարին
լրացուցեր էր:

Բաղտասար բարձր էր հասակով, և
տոկուն կազմուածով. լայն ուսեր, հզօր
անդամներ, և կուրծքին թաւ մազերն՝
կ'արտայայտէին թէ մարմնոյն և թէ
ոգւոյն կորովութիւնն. մազերն շագաւ
նակագոյն էին. դէմքն՝ լայն և լեցուն,
որոյ այտից վերայ՝ կը նշմարուէր ծաղ-
կի հիւանդութեան պատճառած թեթեւ
սպիւններն. կապուտակ, փոքր և գու-
գաւոր աչքերն՝ թաւամաղ արտեանանց
տակ կը փայլէին: Յարատեւութիւն և
մտաց արթնութիւն կը փայլէին իր դի-

մաց վրայ. և այս չընաղագիւտ յատ-
կութեամբ շատ գանձ դիզեր էր:

Կայիի վաճառական էր. այս գործիս
ձեռք զարկեր էր ամենաշնչին դրամա-
զլխով որ հօրը ժառանգութիւնն էր:
Իսկ իւր հայրը յԱնվերսալ չուան հիւսող
էր: Բաղտասար քսան և ութ տարեկան
նորմանտիա ճանապարհորդած ժամա-
նակ՝ հարուստ երկրատիրոջ մը միակ
աղջկան՝ կատարինէի՝ հետ ամուսնացեր
էր: Կատարինէ մանչ զաւակ մը ծնաւ,
և բոլոր իր գութը կեդրոնացուց այս
մանկան վերայ: Տարի մը ետքը՝ վախ-
ճանեցաւ կատարինէ փոխադրական
հիւանդութեամբ. Պաղտասար ալ՝ որ-
պէս զի իր հայրը չտհաճեցընէ՝ հրա-
ժարեցաւ յերկրորդ ամուսնութենէ:

Սիմէոն Մէրքս պատանին 1535է քը-
սան տարեկան էր: Ամենաճիշդ մօրը
կը նմանէր. կարմրայտն և զուարթ-
երես, կայտառ և գիրուկ էր: Թէպէտ և
սաստիկ խաղասէր, հաճոյասէր և ցը-
րուած էր, բայց հայրն՝ որ գրեթէ կը
պաշտէր զինքը՝ այս պակասութիւնն
ըրս կատարելութիւն կը համարէր. և
իր որդւոյն փափագը կատարելու հա-
մար՝ ծախքի չէր խնայեր: